

ԱՊԱԳԱՅ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ^{*)}

(3000 թուական)

Պրոֆէսոր Պաօլօ Մանտեգացայի սօցիալական ֆանտազիա

Գ. ճանապարհորդութիւն դէպի Դինամօ կղզին, որ մէկն է մոլորակային ոյժի չորս մեծ հայթայթողներից.—Մեր մոլորակի մեքենագիտութեան զարգացման պատմութեան թանգարանը.—Նրեք մեծ պատմական դարեր.—Մաստրօնգի գիտը.—Տիեզերական ոյժի բաշխման կենտրոնական բիւրօ:

Փորձ կղզու, հին Յէյլօնի, շքեղ հիւրանոցներից մէկում հանգստանալով, բաւական զբօսնելով ճոխ արմաւենիների հովանու տակ և ցլագ շնչելով վարդերի անուշահոտութեամբ տոգորուած սքանչելի օդը, Պաօլօն և Մարիան հրաժարական տուին հիւրընկալ կղզուն և նստան մի իտալական շոգնաւ, որ մի քանի ժամի ընթացքում բերեց նրանց Դինամօ կղզին:

Այդ կղզին հին ժամանակ բնակեցրած լինելով վայրենի ցեղերով, որոնք վերջերս բոլորովին անհետացել էին երկրի երեսից, ներկայումս տիեզերական էներգիայի չորս հայթաթիչներից մէկն էր երկրի Միացեալ Նահանգների համար:

Պաօլօն ուղեց ցոյց տալ Մարիային այդ սքանչելի աշխատանոցներից մէկը, ուր արտադրոււմ է տիեզերական էներգիա և հաղորդիչների միջոցով տարածոււմ ամբողջ երկրագնդով:

Դինամօի գլխաւոր բնակչութիւնը կալանւում էր արհեստանոցների բանուորներից և ինժեներներից, որոնք կառավարում էին այդ արհեստանոցները և նոյնպէս գլխաւոր բիւրօն և զարդոցն, ուր ժողովուում էին հարիւրաւոր աշակերտներ՝ դինա-

*) Տես «Լուսայ» № 4.

մօլօզի (ուժարան) կամ դինամիկայի դժբաղդի դիպում ստանալու համար:

Դինամօնում առաջին ապշեցնող երևոյթն էր աղմուկի, իրարանցման և ծխի բացակայութիւնը, որոնք միշտ ապացոյց են մեծ կամ փոքր գործարանների մօտաւորութեան: Հանդիպող բանուորներն ամենքը հաջնուած էին մաքուր, առանց մրի հետքի, ամենքի դէմքերը գոհութիւն էին արտայայտում, և նրանք երբէք չէին զանազանւում իրենց մեծաւոր—ինժեներներէից: Դիւաւոր բիւրօի մեծ շինութիւնը, որ հեռուից աչքի էր ընկնում, ամեն կողմից շրջապատուած էր ստուերախիտ պարտէզներով, որոնք իրանց ածուների ծաղիկներից զմայլեցնող անուշահոտութիւն էին տարածում օդի մէջ:

Պալօն և Մարիան հարցրին, թէ կարելի է արդեօք տեսնել կղզու գլխաւոր վերատեսչին, և նրանց իսկոյն առաջնորդեցին ընդունելութեան դահլիճը: Որովհետեւ նրանք յանձնարարական նամակ ունէին վերատեսչի հասցէով, ուստի վերջինս շատ սիրալիւր ընդունեց նրանց, խնդրեցնտսել և սպասել, մինչև որ կուղարկէ ինժեների յետեից, որը ցոյց կը տայ նրանց ամեն հետաքրքրական բան: Մի քանի ըոպէից յայտնուեց մի շատ համակրելի երիտասարդ և առաջարկեց ճանապարհորդներին իր պատրաստականութիւնը:

—Որովհետեւ դուք մասնագէտ չէք, ալ կամենում էք միայն ընդհանուր հասկացողութիւն կազմել այն մասին, թէ ինչպէս ենք մենք հաղորդում ոյժն աշխարհի ամենահեռաւոր կողմերին, ուրեմն մենք կարող ենք ուղղակի սկսել զննութիւնն, առանց առաջուց բացատրելու: Ձեզ յայտնի է, իհարկէ, որ երկրագունտը, բացի մեր կղզուց, ունի այլևս երեք կէտեր, ուր տիեզերական ոյժ է արտադրում: Այսպիսով մենք երկիրը բաժանեցինք չորս վարչական մասերի. մենք յատկապէս թղթակցում ենք ամբողջ Ասիայի և Միկրօնեզիայի հետ: Նախ և առաջ ես ձեզ ցոյց կը տամ այն պատմական թանգարանը, ուր պահուում են ըոլոր ժամանակների մեքենայական մօդէլները:

Այս խօսքերն ասելով ինժեները տարաւ այցելուներին պատմական թանգարանի առաջին բաժինը:

—Ահա մեքենագիտութեան առաջին քայլերը,—շարունակեց նա:—Դուք այստեղ տեսնում էք, թէ ինչպէս է մարդս սկսել օգուտ քաղել կենդանիների ոյժից: Շները, ձիաները, միասապատ ուղտերը, փղերը և միւս կենդանիները մարդու տրամադրութեանն են նուիրել իրանց ոյժերը:

Լուսնայ

Հետևեալ բաժնում այցելուները տեսան ընութեան ոյժերի մարդուս ձեռքով շահագործուելու առաջին փորձերը՝ կրակի զանազան գործադրութիւնները, ջրի և քամու աղօրիքը, առագաստանաւը և այլն: Պաօլօն և Մարիան, որոնք երկուսն էլ լաւ ծանօթ էին մեքենագիտութեան, մանաւանդ նրա պատմութեանը ակնյայտնի զարմանքով էին նայում այդ բոլոր հնութիւններին: Նրանց, XXXI դարի վերջում ապրողներին, անհասկանալի էր թւում, թէ ինչպէս կարելի է ջրաղացի բարերը շարժելու և մանաւանդ ուղեգնացութեան համար բաւականաւ ախլիսի չնչին և պատահական ոյժով, ինչպիսին քամին է:

— Իսկ ահա այստեղ, — ասաց ինժեները, ցոյց տալով թանգարանի մի նոր բաժին, — մեքենագիտութիւնն արդէն ահագին քայլ է անում դէպի առաջ: Այստեղ ժողովուած են XIX և XX դարերի մեքենաները և գործիքները, երբ առաջին անգամ գործադրուեցին նոր ոյժերը՝ շոգին և էլէքտրականութիւնը, որոնք մինչ այն ապարդիւն կորչում էին մարդկութեան համար, — ահա ձեզ շոգեկառքը, հեռագիրը, հեռախօսը, ֆօնօգրաֆը և այլն: Համարձակ կարելի է ասել, որ շոգեկառքը և հեռադրութիւնը դարազուլիս կազմեցին մարդկային ազգի պատմութեան մէջ, ինչպէս որ վերջերս էլ հիմք դրուեց մեզ ժամանակակից մի երրորդ դարազլիսի այն գիւտով, որ հնարաւոր է համարում օգտուել մեքենագիտութեան մէջ նեարդային ոյժից: Այդ մեծ գիւտի հեղինակը եղաւ, ինչպէս ձեզ իհարկէ յայտնի է, անգլիացի Մաստրօնգը, մեռած 2654 թուին: Ահա նրա արձանը Վօլտի և Ուատտի արձանների կողքին:

— Այո, կասկած չկայ, — շարունակեց առաջնորդը, — որ շոգին և էլէքտրականութիւնը, որոնք հաղորդակցութեան արագութիւնը մարդկանց միջև այնպէս սաստկացրին, շատ աւելի նպաստեցին պատերազմների ոչնչանալուն, քան բոլոր գրքերն, օրագիրները, պարլամէնտներն, օրէնքները և կրօններն անգամ, և հիմք դրին մարդկային ընութեան համապատասխանող մի նոր բարոյական կեանքի:

— XIX դարի վերջում մարդկութիւնն այնքան խոր ընկղմուեց շահամոլութեան և զգայական զուարճութիւնների տղի մէջ, որ թէ անհատական և թէ հասարակական բարոյականութիւնը բոլորովին անկման մէջ էր գտնուում: Ամենքը զոյւստ էին այս ընդհանուր նւթման ծանրութիւնը և անպատշաճով յիշում անցյալ ժամանակները: Ոչ ոք չգիտէր, ուր որոնել փրկութիւն, և ինչպէս 2000 տարի առաջ մարդիկ փափագելով

սպասում էին Մեսիայի գալստեան, այնպէս էլ այժմ ամենքը փափագում էին նոր խօսք լսելու... Ընդհանուր խառնակութեան և անբարայակութեան մէջ միայն գիտութիւնն էր, որ շարունակում էր իր քայլերը դէպի առաջ և, բոլոր փրկիսփաների և երկրաբանների վարդապետութեան հակառակ, աննկատելի կերպով պատրաստում էր մարդկութեան համար մի նոր դարագլուխ:

—Երկաթուղին, հեռագիրը և միւս գիւտերն ու հնարումները, որոնք արուեստին փորձնական գիտութիւններէ միջոցով, մօտեցրին մարդկանց իրար, ոչնչացրին նրանց միջև ազգայնական անջատումը, դարձրին նրանց մի ընտանիք—մարդկութիւն և վերջիվերջոյ այնտեղը հասցրին, որ պատերազմի պէս երկայթն ուղղակի անմտածելի դարձաւ Այս, նոր բարոյականութեամբ մարդիկ գիտութեան մշակներին ևն պարտական:

—Բարոյական առաջգիւտութեան հետ բանաստեղծութիւնն էլ կենդանացաւ, որը մինչ այն՝ կարճատեւ քննադատները վերջնականապէս մեռած էին համարում: Գիտնականների եռանդով և նրանց հասճաբեղ գիւտերով զգուրդեա՞ծ՝ նա համարձակ վեր պարզեց իր ճակատը, և նրա քրմերը պարզեցին աշխարհին բազմաթիւ նոր հրաշալի երկեր:

Պաօլօս և Մարիան մեծ ուշադրութեամբ էին լսում իրանց առաջնորդին: Բոլոր նրա ցոյց տուածները այնպէս նոր էին նրանց համար, իսկ ճառախօսութիւնը հերտասարդ ինժեների, որ ըստ հրեութիւն գիտութեան սիրահար էր, մի այնպիսի ոգևորութիւնով էր լցուած, որ անկարելի էր չհետաքրքրուել:

—Այժմ,—շարունակեց ինժեները,—մի կողմ թողնենք Ուատտին և Վօլտին և զբաղուենք Մաստրօնգով, վերջին և ամենամեծ գիտնականով, որի գիւտն այնպէս ուժգին առաջ մղեց մարդկութիւնը. Ձէք հաւատալ, եթէ ասեմ, որ այդ գիւտով գիտնականը պարտական էր... լուսատանիկ միջատին... Այդ փոքրիկ միջատը նոյն ծառայութիւնն արեց Մաստրօնգին, ինչ ծառայութիւն որ արել էր Պիզայի մայր եկեղեցու ջահը Գալիլէին, կամ ծառից ընկած խնձորը —Նիւտօնին: Մի անգամ Պափայում, Տիզիֆոսի ափում զբօսնելիս, Մաստրօնգը գմայլմամբ նայում էր օդի մէջ պտտող լուսատանիկներին, յետոյ իջաւ գետափը, նստաւ նստարանի վրայ և մտածման մէջ ընկաւ... յանկարծ վեր թռչելով տեղից՝ Արքիմեդի պէս զարկեց ճակատին և բացականչեց՝ «Էվրիկա»:

—Մեծ գիւտն արուած էր արդէն:

—Մաստրօնգն իր յիշողութիւնների մէջ նկարագրում է

մտածման ձևաշրջումը (էւօլիցիա), որը բերեց հասցրեց նրան հանճարեղ գիւտին: Փոքրիկ միջատը, մտածում էր նա, առանց որևէ օժանդակ միջոցի արտադրում է լոյս և մարեցնում նրան իր կամքով: յետոյ, շատ կենդանիներ կարողանում են կամայապէս սաստկացնել իրանց մէջ տաքութիւն և տալ էլէքտրական հոսանք. վերջապէս ամենաչնչին էակները կարողանում են շատ աւելի արագ իրանց տեղը փոխել, քան թէ մեր շոգեկառքերը: Մի խօսքով, կենդանիներն առանց մետաղների, առանց պողպատի, առանց տաքութիւն ու. լոյս կողմնակի միջոցով ստանալու, այսինքն առանց այն ամենի, որին պիտի դիմէ մեքենագիտութիւնը, կարողանում են արտադրել լոյս, էլէքտրականութիւն, ջերմութիւն, և զարգացնել մի անսովոր արագութիւն: Ուրեմն ջանանք ուսումնասիրել, թէ ի՞նչի մէջ են կայանում այդ երևոյթների աղբիւրները, և այնուհետև փորձենք նրանց ընդօրինակել: Ձէ՞ որ բոլոր մարդկային գիւտերը ոչ այլ ինչ են, իթէ ոչ բնութեան նմանողութիւն, կամ նրա որևէ ոյժի գործադրութիւն, ոյժի, որ գոյութիւն է ունեցել միշտ, մեզանից առաջ և մեզանից անկախ: Այդ օրուանից Մաստրօնգը փակուեց իր աշխատանոցում և մանրագիտակը եռքին սկսաւ ուսումնասիրել ամեն կողմից կենդանի կանաժութեան շախմատութիւնը (պրօտօպլազմա): Շատ տարիներ ուսումնասիրելուց յետոյ նա կարողացաւ հնար գտնել արտադրելու կենդանի շախմատութիւն: Երբ ինքը կոչեց պանդինամօ: Ահա այս արուեստական շախմատութի օգնութեամբ կարելի է ստեղծել աղբիւրներ՝ էլէքտրականութիւն, լոյս, ջերմութիւն և մագնիսականութիւն ստանալու համար: Պանդինամօն երկրորդական տեղ տուեց Պապինիան կաթսային, զանազան բատարէաներին և հին մեքենագիտութեան ու էլէքտրօտեխնիկայի միւս հանդերձանքներին և մեքենաներին: Այստեղ թանգարանում դուք կարող էք հետեւել այն բոլոր շրջաններին, որոնցով անցել է Մաստրօնգի մեծ գիւտը, բարւոքուելով և կատարելագործուելով երեք դարի ընթացքում նրա յաջորդների ձեռքով:

—Մեր կղզու կենդրոնական աշխատանոցում դուք կը տեսնէք, ինչպէս պանդինամօն ոյժեր է մատակարարում երկրագնդի ամեն ծայրերին: Աննշան յարմարացումների և յատուկ հակագործիչների (րէակտիւ) օգնութեամբ հասարակ բանաւորն արձակում է հոսանք, որ տանում է լոյս, ջերմութիւն, էլէքտրականութիւն և առհասարակ մեքենայական ոյժ դէպի եւզածդ հեռաւոր կէտը: Հաղորդիչները, որոնց միջով անցնում են հոսանքները, պատրաստուած են ոչ թէ մետաղից, ինչպէս

հին ժամանակ շինուում էին հեռագրի և հեռախօսի երկաթաթելերը, այլ ալ'բուսին կոչուած առանձին առաձգական նիւթից շինուած խողովակիկներէց: Այս խողովակիկները մէկը միւսի մէջ են ամփոփուած, և նրանց բաժանում է մի առանձին հեղուկ: Իրա շնորհիւ միւսնոյն հաղորդիչը միաժամանակ կարող է տալ և՛ լոյս և՛ ջերմութիւն և՛ մեքենայական ոյժ: Թէև այդ խողովակիկները, որոնք իրօք ներկայացնում են մեր նեարդերի ճիշտ պատճէնն, այնքան լաւ են, որ պատճառ չկայ նրանցից լաւը ցանկանալու, այնուամենայնիւ մեր վերատեսուչը, որ արժանապէս նշանաւոր գիտնականի հռչակ է վայելում, ներկայումս միջոց է որոնում առանց նրանց կառավարուելու, անմիջապէս հաղորդելով ոյժն օդի և երկրային կեղևի միջով և, կարծեմ, յոյս ունի ցանկալի հետևանքին հասնելու: Թէ՛ հրշափ մեծ է պանդինամօր ոյժը, և ինչպէս լաւ են գործում խողովակիկները, կարող էք դատել, օրինակ, այն փորձից, որով միանգամից Հիմալայեան լեռների ամբողջ շղթան լուսաւորուեց: Այդ փորձն արուեց անցեալ ամիս և փայլուն կերպով աշողուեց:

Մարիան հիացմունքով էր լսում ինժեներին, բայց և այնպէս չկարողացաւ զսպել իրան կատակից:

—Այսպիսով, հաւանական է, որ դուք մի գեղեցիկ օր Մասսաչուսէթի հնարած նախանիւթի մէջ արուեստական մտածմունք էլ կը զարթեցնէք:

—Ինչո՞ւ ոչ, — լրջօրէն պատասխանեց երիտասարդ ոգևորուողը: — Միտքն էլ այն ոյժի արտադրութիւնն է, որն իր մէջ կրում է նախանիւթը: Երբ մենք կը կատարելագործենք պանդինամօն և կը հնարենք այն բաղադրութիւնը, որ մեր ուղեղի մոխրագոյն նիւթի հետ միատեսակ կը լինի, այն ժամանակ կը կարողանանք զարթեցնել մտածելու ընդունակութիւնն այնպէս ինչպէս այժմ ստանում ենք լոյս կամ ջերմութիւն: Սակայն զնանք, ես ցոյց կը տամ ձեզ ոյժերի մատակարարման բաժինը:

Գաւօթին և Մարիային նրանց առաջնորդը անբաւ մի ընդարձակ բոլորածե դահլիճ, որից ամեն կողմ անարժուած էին բազմաթիւ թելեր: Մառայողների մի բազմութիւն զբաղուած էր հեռագիրներ ստանալով և ոյժեր հաղորդելով: Երկու նպաստակի համար էլ միևնոյն խողովակիկներն էին ծառայում:

Ինժեները մօտեցաւ սեղաններից մէկին և այցելուներին ասաց.

—Կըբարեհաճէք ուշ դարձնել: Ահա մի հեռագիր Գէկի-նից: Նա յայտնում է հետեւեալը: Էվադն ի պատիւ Կոնֆուցիոս-

սի մեծ տօն է. մեզ անպատճառ հարկաւոր է ամբողջ գիշեր շարունակ ունենալ կարմրախառը կապտաւուն լոյս: Եւ վաղը մենք կուղարկենք, ինչ որ մեզնից պահանջում են Չինաստանից:

— Բայց ահա պահանջ Հիմալայից, կարդացէք:

«Հիմալայի տակով անցկացրած տուննէլում, — ասուած էր հեռագրում, — զտնուած է կվարցի ամենաամուր տիսակը. նրան ծակելու համար մեզ անհրաժեշտ է եռապատիկ ոյժ»:

— Այդ պահանջն, — ասաց ինժեներն, — արդէն կատարուած է:

Ապա նա հրաւիրեց Պաօլօին և Մարիային մօտենալ դահլիճի մէջտեղը դրած բոլորակ սեղանին, որի վրայ տարածուած էր մի մեծ աշխարհագրական քարտէզ, ամբողջովին խայտաճաժուկ դարձած կարմիր նշաններից:

— Այս քարտէզի վրայ ենք մենք նշանակում բոլոր բաւարարութիւն ստացած պահանջները: Քարտէզն ամեն օր նորոգւում է, և տարուայ վերջին մի հատոր է կազմուած, որով կարելի է իմանալ մեր ծախքերը: Նրա պատճէնը մենք ուղարկում ենք Անդրօպօլ: Նոյնն անում են և միւս երեք կենտրոնները: Այսպիսով Անդրօպօլում ստացւում է մեր մոլորակի քաղաքակրթութեան լիակատար պատկերը:

— Մեքենագիտական, իհարկէ, ոչ թէ բարոյական, — վճռեց նկատել Մարիան:

— Յարգելի տիկին, — պատասխանեց երիտասարդը, — ես, ինչպէս ինժեներ, միմիայն մեքենագիտական առաջադիմութեանը կարող եմ նպաստել, բայց ինձ թւում է, որ բարոյական առաջադիմութիւնն էլ նրա հետ զուգընթաց է զնուծելի: Դուք կերթաք Անդրօպօլ, այնտեղ կարող էք գտնել վիճակագրական տեղեկութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ մարդկային բարոյականութիւնն անմիջական կախում ունի քաղաքակրթութեան յաջողութեանը:

Դիմաժօ կղզու բոլոր հրաշքները զննելուց և բոլոր տեսածներով գոհ մնալուց յետոյ, մեր ճանապարհորդները շնորհակալութիւն յայտնեցին սիրալիր ինժեներին և հեռացան կղզուց, աւելի երջանիկ համարելով իրանց քան երբեկիցէ այն գիտակցութեամբ, թէ նրանք մարդ են:

Դ. Դիմաժօյից մեկնումը եւ հասնելը Անդրօպօլ. — Քաղաքի ընդհանուր տեսքը. — Տները, նրանց ճարտարապետութիւնը եւ յօրինուածքը. — Անդրօպօլի հրապարակները. — Դիմաժի-

կալան քիւօն.— Շուկայի զննումը.— Գողի կալանաւորումը
և դատելը:

Մեր ճանապարհորդները Դինամօից ուղղելով ճանապարհը դէպի Հնդկաստան՝ գնացին օդապարիկով ուղղակի Անդրօպօլ, ընդհանուր աշխարհի մայրաքաղաքը: Մի քանի ժամ ճանապարհ գնալով՝ նրանք տեսան իրանցից ներքև հին հնդկացոյ սրբազան գետի, Գանգէսի լայն ժապււէնը, որ իր պղտոր ալիքները գլորում էր դէպի ծով, և այդ երկրում երբեմն իշխող Կալիաթա քաղաքի աւերակները: Այստեղից նրանք ուղղութիւնը փոխեցին դէպի հիւսիս, և շուտով նրանց աչքի առաջ նկարուեց Հիմալայեան փառանել լեռնաշղթան, որի ձիւնապատ գագաթները արևի տակ արծաթանման փայլում էին: Ումն կողմից մեր ճանապարհորդներին հետ նոյն ուղղութիւնով սաւառնում էին, վիթխարի թռչունների նման, ամեն ձևի և մեծութեան օդապարիկներ: Ամենը մի կէտի էին դիմում, ինչպէս արիւնը սրտին: Մեր մոլորակի քաղաքակրթութեան կենդրոն Անդրօպօլը իսկապէս կարելի էր համաշխարհային սիրտ անուանել, Նա հիմնուեց 2500 թուին անգլիական քաղաքացի Կօսմէտի ձեռքով, որ մէկն էր ամենամեծ օրէնսդէտներից և որ 2490 թուին, աշխարհիս ամեն կողմերի ներկայացուցիչներից Լօնդոնում կայացած մի բազմամարդ ժողովի մէջ, սկիզբ դրեց երկրի Միացեալ Նահանգներին: Այդ ժողովում, երկար ու առաջ վիճարանութիւններից յետոյ, համաշխարհային մայրաքաղաքի համար տեղ ընտրեցին Դարժիկինգը Ասիայում, իբրև ամենից աւելի զեղանկար և առողջարար վայր ամբողջ երկրագնդում:

Անդրօպօլում մեր ճանապարհորդների համար առաջին ուշադրաւ բանը եղաւ շինուածքների անսովոր գեղեցկութիւնը, որոնք բոլորը, կարծես, ընտիր մարմարոնից էին կառուցուած: XIX դարում տները շինուում էին փայտից, աղիւսից և երբեմն երկաթից և մեծ գումարներ էին արժուած: 3000 թուականին ամեն մի աղքատ կարող էր սեփական տուն ունենալ, որովհետեւ նրան շինելու համար պահանջուում էր միայն մի օր և շատ չնչին գումար: Իբրև շինութեան նիւթ գործ է ածուում մի առանձին հեղուկ, որ պարասուում էր պէսպէս հոտոնհրից քիմիապէս մշակուելով: Այդ հեղուկը մօզէլի, կամ աւելի լաւ է ասել, կաղապարի մէջ էին ածում, որը դնում էին այն տեղում, ուր տունն էին ուզում կանգնեցնել: Այսպիսի զանազան գնանոց կաղապարներ միշտ պատրաստ գտնուում էին: Հեղուկը շատ շուտ սառնում էր, կաղապարը վերցւում, և նոր տան տէ-

րը փայլ էր տալիս նրան իր ուղածին պէս, կամ մարմարիոնի գոյն տալով, կամ թէ ոսկով կամ արծաթով պատելով:

Մեր ճանապարհորդները, քաղաքի հետ աւելի լաւ ծանօթանալու համար, սկսան ոտքով մանգալ նրա փողոցներով: Ախորժելի էր թւում նրանց աղմկի և իրար հրելու բացակայութիւնը փողոցներում: Առաջինը բացատրւում էր նրանով, որ փողոցամէջերը և մայթերը շինուած էին կաուչուկից, իսկ երկրորդը—որ հետեակներ ու կառքեր սակաւ էին, ըստորում տեղափոխութեան համար գլխաւորապէս օդապարիկներ էին գործածուած, և հազիւ երբեմն պատահում էին էլէքտրակառքեր և սայլեր: Քաղաքում շատ կային բոլորակ և քառակուսի հրապարակներ: Նրանք ամենը ծածկուած էին ծառերով, ծաղկանոցներով և զարդարուած արձաններով ու շատրուաններով: Բոլոր ծառուղիներում ցանկացողների համար դրուած էին յարմար նստարաններ և բաղկաթոռներ: Հրապարակներից մէկի մէջտեղը բարձրանում էր մի փառահեղ բլուր, որին այնպիսի տեսք էր տրուած, որ, կարծես, նոր էր բերուած նա այդտեղ ալպեան լեռների նոյն իսկ կենդրոնից, Նրա վրայ կային և ժայռեր և ալպեան հարուստ բուսականութիւն և արծաթափայլ առուակներ, որոնք գալարւում էին կիրճերի միջով, ինչպէս առասպելական յաւերժահարսի մազեր: Այդ առուակները ներքեում ժողովւում էին մի ահագին մեծութեան աւազանի մէջ, ուր ամեն կողմում փայլում էին երփներանգ ձկներ, լողում փառահեղ կառավներ և ուրիշ թռչուններ և ջուր սրսկում հինկլասիքական ոճով շինուած շատրուանների: Երեկոյեան շատրուաններն էլէքտրականութիւնով էին լուսաւորւում, և այն ժամանակ մի այնպիսի սքանչելի տեսարան էին ներկայացնում, որ աչքը երբէք չէր կշտանում նայելուց: Բացի ծաղիկներից, շատրուաններից և արձաններից հրապարակները զարդարուած էին բոլոր ժամանակների և ազգերի մեծ մարդկանց յուշարձաններով, և ամեն մի հրապարակ պատկերացնում էր մի որևէ պատմական դար: Այսպէս մէկում կանգնած էին կլասիքական էլլադայի մեծ մարդկանց արձանները, միւսում հին Հռոմէր, երրորդում գեղեցկապէս շարուած էին վերածնութեան դարի նշանաւոր բանաստեղծների, գիտնականների և նկարիչների յուշարձանները, որոնք—նկատենք ի միջի այլոց—արժանի էին Անդրօպոլի բոլոր հրապարակները գրաւելու: Միւս հրապարակներում կարելի էր տեսնել Անգլիայի պետական մարդկանց, գերմանական փիլիսոփաների և ուրիշների յուշարձանները: Բոլոր յուշարձանների վերաառութիւնները համառօտապէս յայ-

տարարում էին միայն մեծ մարդու անունը, ծննդեան և մահուան օրերը:

Անդրօպոլի հրապարակները զննելուց յետոյ, Պաօլօն և Մարիան էլէքտրակառքով գնացին դինամիկական բիւրօ, որ բաւական հեռու էր նրանց իջևանած հիւրանոցից: Բիւրօն ահագին մեծութեան շինուած էր և իշխում էր բոլոր հարեան շինութիւնների վրայ, որոնք նրա մօտ մի մի թղուկներ էին երևում: Դա իսկական պալատ էր, պարզ և լուրջ ճարտարապետութեան գործ, որի մէջ աւելի ուշ էր դարձրած օգտակարի բան գեղեցիկի վրայ: Բիւրօի վերատեսուչը, որի անունով Պաօլօն յանձնարարական նամակ ունէր, ինքն էր առաջնորդողի դեր կատարում մեր ճանապարհորդների համար, բայց, Դինամօ կղզում տեսածներից յետոյ, Անդրօպոլի բիւրօն չէր կարող նրանց մէջ մեծ դարմանք շարժել: Ոյժերի մատակարարման բաժնում բոլորը նոյնն էր, ինչ որ Դինամօում: Մի հասարակ բանուոր կառավարում էր ոյժերի մատակարարումը դանազան հաստատութիւնների և մասնաւոր անձերի, որոնք ամեն օր պահանջում էին որևէ ոյժի որոշ քանակութիւն: Հարեան դահլիճում Պաօլօն և Մարիան մի քառորդ ժամ մնացին: Այստեղ արտակարգ պահանջներին էին գոհացում տրուում, և ծառայողների թիւը շատ էր, մէկը լոյս էր ուղարկում, միւսը՝ ջերմութիւն, երրորդը՝ մեքենայական ոյժ և այլն: Այստեղ պահանջները ստացում էին ոչ թէ հին հեռախօսով, թէև նա էլ բաւականին կատարելագործուած էր, այլ դեպէշների միջոցով, որոնք իրանք իրանց գծագրում էին բաց գոյնի տաւերով՝ պատերից կախուած սև տախտակիկների վրայ: Այսպէս օրինակ, Պաօլօն և Մարիան կարդացին՝ «Էդիսօն ընկերութեան գիւղատնտեսական մեքենաների գործարան: Հարաւարեւելեան շրջան, Վօլտի փողոց № 37: Վաղը բանուորների վրայ կաւելանալ երրորդը, անհրաժեշտ է այլևս մի մեքենայական ոյժ». միւս աղիւսակի վրայ սպիտակին էին տալիս բաւեր՝ «Հիւսիսարեւմտեան շրջան, Ռօմէրի փողոց № 59: Այս երեկոյ ընտանեկան պարերեկոյթ կայ, եռապատիկ լոյս է հարկաւոր»: Այն միջոցին, երբ Պաօլօն և Մարիան հեռագիրներն էին զննում, զանգակի մի սուր ձայն լսուեց, և իսկոյն մի առանձին բաժնում, որ «պատահարներ» վերառութիւնն ունէր, հեռագիր երևաց՝ «Ճենաբոնական շրջան, Արուեստների Ակադեմիայի դահլիճ: Փոքրիկ հրդեհ բռնկուեց տպագրատանը»:

Վերատեսուչը հեռացրեց բանուորին և ինքը հեռագրով պատասխանեց, ժանյապաղ բացէք անխաթիւ պահեստարանի

ծորակը և խողովակով միացրէք հրդեհի տեղի հետ, եթէ չէք կարող հանգցնել, հաղորդեցէք:

Մի քանի բողբոջ պատասխան ստացուեց. «կրակը հանգցրած է. շատ շնորհակալ ենք»:

Վերատեսուէլը նստեց և դառնալով այցելուներին ասաց

— Իմ կարծիքով, այդ պարոն ակադեմիկներին մի լաւ յանդիմանութիւն պէտք է ուղարկել: Պէտք է ձեզ ասեմ, որ բոլոր հասարակական շինուածքներում կան հեղուկ ածխած-թուով լի պահեստարաններ, որոնցից մի բողբոջ կարելի է ռետնի պարկը լցնել և ուր ուզենաս՝ տանել: Խնչպէս ձեզ լայտնի է, ածխածթու մի վայրկեանում հանգցնում է բոցը: Բայց այդ բարեհոգի գեղարուեստագէտները արհամարհում են գիտական գիտերը և բնաւ ծանօթ չեն բնագիտութեան և քիմիայի հետ, և երբ մի փոքրիկ պատահար է լինում, փոխանակ գործելու, բոլորովին գլուխները կորցնում են: Հէնց հիմա դուք տեսաք դրա պերճախօս օրինակը: Բայց թող ներուրի նրանց իրանց տգիտութիւնը:

Միւս օրը Պաօլօն և Մարիան գնացին Անդրօպօլի շուկան դիտելու, որ գտնւում էր մի բարձր բլրի վրայ: Հետևակներէ համար յարմար շաւիղներ էին շինուած, իսկ նրանց միջև անցնում էին ըէլսային ուղիներ, որոնցով անդադար անցուղարձ էին անում վազօններ, ծանրաբեռնուած մսով, բանջարեղէնով, ձկնով, մրգերով և ծաղիկներով. — այս բոլորը բաւական գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Շուկան ինքը գիտեղուած էր շատ բաժիններից բաղկացած մի ահագին շինուածքի մէջ, ուր ուտիւղէնի նկատմամբ ամեն ուղածդ կարող էիր գտնել: Գնողն ինչ որ իրան պէտք էր ընտրում էր այդտեղ, փողը վճարում և հեռանում, իսկ գնածը հասցէի համեմատ բերում էին նրա տունը:

Պաօլօի և Մարիայի ուշադրութիւնն ամենից շատ գրաւեցին ծաղկային և մրգային բաժինները: Այստեղ օդը յագեցած էր զմայլելի անուշահոտութեամբ և համեմատաբար փոքր տարածութեան մէջ կարելի էր տեսնել աշխարհի բոլոր կողմերի բուսականութիւնը: Խնչպէս յայտնի է, XIX դարում պարտեզները հազուադիւս էին, XXX-րդում նրանք ամեն տեղ տարածուած էին խիստ ճոխ բուսականութիւնով: Ծաղիկների և մրգերի մշակութիւնը շատ էր առաջադիմել, հիւսային Ռուսաստանի լայնատարած դաշտերում ազատ հասունանում է խաղողը գինի քամելու համար, իսկ Նորվեգիայում քիչ չէ պատահում տեսնել կենտրոնական Աֆրիկայի օրխիդէյ (խոլորձ) ծաղիկը

Սակայն ոչ միայն կլիման և աշխարհագրական դիրքը կորցրել են ամեն նշանակութիւն 3000 թուականի պարտիզպանի համար, այլև տարուայ եղանակներն անգամ — ձմեռն էլ, ինչպէս ամառը, միեւնոյն բոյսերը ծաղկում և պտուղ են տալիս: Բացի նրանից, պէս-պէս բոյսերի սերմեր խառնելով՝ սկսան տրտաղբել նոր, չեղած պտուղներ և ծաղիկներ: Յատուկ մրգեղէնի բաժնում Պաօլօն և Մարիան հաճութեամբ զննում էին մորի, ելակի, խնձորի, դեղձի, բանանի, անանասի և ուրիշ ամենատեսակ մրգերի և պտուղների խոշոր տեսակները, որոնցից շատերը բոլորովին անյայտ էին նախկին դարերի մարդկանց: Շատերի թւում նրանց ուշը գրուեց մի միւրգ, որ տեսքով դեղձի նման էր, բայց նրանից աւելի խոշոր էր և անուշահոտ: Այդ միւրգը գտնուած էր կուսական անտառներում և Ներսիսայի կլիմային վարժեցնուած մի ոմն Մանտեգացայի ձեռքով, որ ծանօթացրել էր հերոպացիներին նաև շատ պտուղների մշակման հետ:

Մի խանութի մօտով անցնելով մեր ճանապարհորդները պատահմամբ նկատեցին, որ մի տղայ տեփրից թոցրեց մի նարինջ և կամենում էր փախչել: Բայց ծախողը նկատեց նրա արարքը և բարձրաձայն գոչեց՝ «օգնեցէք, գող է»:

Նոյն բուլէին շուկայի ամեն կողմից աղաղակներ լսուեցին՝ «արդարադատութիւն, արդարադատութիւն»:

Մի պարոն բռնեց փոքրիկ գողի օձիքից և նոյնպէս աղաղակեց՝ «արդարադատութիւն»։ 3000 թուականին չկային ոչ ոստիկաններ, ոչ հրացանակիրներ, ոչ էլ հասարակաց անդորրութեան ուրիշ պահպանողներ: Նրաց սլաշտօնը քաղաքացիներն իրանք էին վարում, նրա հետ միասին ստանձնելով և դատաւորների դերը:

Փոքրիկ գողին շրջապատեցին, և մի բուլէի մէջ հօթը մարդուց դատարան կաղմուեց, այսպէս կոչուած հօթի դատաստան: Ամբոխը խռնուեց յանպատրաստից կաղմուած դատարանի շուրջը:

— Ի՞նչու գողացար նարինջը, — հարցրեց փոքրիկ յանցաւորից նրան կալանաւորող քաղաքացին:

— Ծարաւ էի...

— Բայց չէ՞ որ նարինջը քեզ չէր պատկանում:

— Ո՛չ, բայց այստեղ ի՞նչպէս շատ կայ նրանից...

— Դա արդարացում չէ: Դու կարող էիր գնել կամ խնդրել, բայց որովհետև գողացար, ուստի կերթաս արդարադատութեան տունը:

Դատաւորներից մէկն ասաց.

— Ես բնակւում եմ այն կողմերում և կարող եմ գողին տանել: Տուէք ինձ վճռագիրը:

Միւսն իր յուշատետրից մի թերթիկ պատռեց և գրեց 'նրա վրայ'՝ «Այս մանուկը նարինջ է գողացել»: Բոլոր եօթը դատաւորները այդ թերթիկին ստորագրեցին, ուղեկիցը տարաւ նրան և գողի արդարադատութեան տունը: Յետոյ ամեն բան իր սովորական կարգն ընդունեց:

— Ահա, Մարիա, մենք դատարանում էլ եղանք և դատաւիճիւ էլ լսեցինք, թէ և աննշան յանցանքի համար, Ինկատի ունեցիր, որ այս կերպ են դատում այստեղ և ասելի ծանր յանցանքների համար: Այդ դէպքում գործը վերաբերում էր մի չնչին նարինջի գողութեան, բայց եթէ այդ մանուկը գողացած լինէր գունարներ կամ փողով լիքը մի քսակ, քաղաքացիները նոյնպէս կ'աղաղակէին՝ «արդարադատութիւն, արդարադատութիւն», նոյնպէս եօթի դատաստան կը կազմուէր, և յանցաւորին կ'ուղարկէին արդարադատութեան տունը: Ի դէպ ասել, այդ տունն արդէն ոչ մի նմանութիւն չունի վաղեմի բանտերի հետ: Նրան ասելի հեշտ դպրոց կարելի է ասել, ուր ջանք են անում յանցաւորին ուղղել, առաջուց ուսումնասիրելով յանցանքի բոլոր գրգիռն պատճառները:

— Բայց գու ինձ ասում էիր, — ընդհատեց Մարիան իր փեսացուի խօսքը, — թէ տառնձին մասնագէտներ ըննում են նորածին մանուկի ուղեղը, և եթէ նրանում յանցաւորութեան սաղմեր գտան, այդպիսի մանուկներին ոչնչացնում են:

— Այո, ճշմարիտ է, — պատասխանեց Պաօլօն, — նրանց իրաւապէս են ոչնչացնում, ըստորում նրանք իրանց ուղեղային ճակատագրական կազմակերպութեան շնորհիւ անպատճառ պէտք է յանցաւոր դառնան: Նրանք անդադնալի կերպով գող և մարդասպան կը լինէին, մինչև անգամ այն դէպքում, եթէ հարուստ լինէին և ամենալաւ պայմաններով շրջապատուած: Յակայն դա մի բացառիկ երեւոյթ է: Ընդհանրապէս գտաելով, բոլոր մարդիկ ազնիւ և բարի են ծնւում, բայց արովհեակ վայրենիների սերունդներ են, որոնք բռնութիւնը նորմալ երեւոյթ էին համարում, ուստի սերունդներն էլ իրանց ուղեղի մէջ պահպանում են յանցաւորութեան սերմը, որը բարեյայտող պայմաններում կարող է զարգանալ և տանել դէպի սպանութիւն կամ մի այլ յանցանք: Աշխարհում չկայ մի մարդ, որ ասելութեան, սիրոյ, կամ մի այլ կրքի յուզմունքի ժամանակ յանցաւորութեան ընդունակ չլինի:

—Արդէն շատ դարեր են, ինչ մեր քաղաքակրթութիւնը աշխատում է գտնել մարդկային դաստիարակութեան մի այնպիսի մեթոդ, որով մարդուս մէջ խլանային յանցաւորութեան ժառանգական սերմերը. միւս կողմից ջանք են անում սօցիալական կեանքն այնպէս կազմակերպել, որ յանցաւորութիւնը ոչ միայն աւելորդ դառնայ, այլև անհեթեթ և անօգուտ նոյն իսկ յանցաւորի համար: Կար ժամանակ, երբ արդարադատութիւնը միմիայն պատիժներով էր ղեւղւում, այժմ նրա գլխաւոր պարտաւորութիւնն է միջոցներ որոնել յանցաւորութեան առաջն առնելու, նրան դժուարին կամ ուղղակի անհնարին դարձնելու: Եւ քաղաքակրթութեան այդ ջանքը զուր չի կորչում, ստատիստիքական ցուցումներից մենք տեսնում ենք, որ յանցաւորութեան տոկոսն անդադար իջնում է: Իհարկէ, մենք դեռ ևս չենք ազատուել գողերից և մարդասպաններից, որովհետեւ բարոյական առաջադիմութիւնը մտաւորականից աւելի դանդաղ է շարժւում, բայց պէտք է յուսաւ, որ կը գայ մի օր, երբ յանցանքներն աւանդութիւնների կարգը կ'անցնեն:

—Ուրիմն այժմ չե՞ն պատժում յանցանքի համար, — հարցրեց Մարիան:

—Ոչ, պատժում են, միայն այլ կերպ քան թէ հին ժամանակ: Ամենից առաջ, յանցաւորին ազատութիւնից են զրկում և փակում արդարադատութեան մէջ: Այստեղ ջանք են անում ապացուցանել նրան, թէ նրա կատարած գործը ոչ միայն մոլորութիւն է և մեղք, այլ և նոյն իսկ նրա համար անօգուտ է ամեն կողմով: Բանտարգելութիւնը մի քանի օր կամ շաբաթ է տևում և շատ քիչ դէպքերում, մի քանի ամիս: Դրանով պատիժը չի վերջանում, երբ ազատութիւն են տալիս նրան, զգեստի վրայ կարում են գունաւոր ժապաւէն, որի շնորհիւ ամենքը նրան արհամարհանքով են նայում: Գողերը դեղնագոյն ժապաւէն են կրում, իսկ աւելի ծանր յանցաւորները — կարմիր: Այդ նշանը չի վերջնւում յանցաւորի վրայից, մինչև որ նա իր վարքով չ'ապացուցանէ, թէ բոլորովին ուղղուել է:

—Իսկ ի՞նչպէս են վարւում յանցանքը կրկնողի հետ:

—Նրանց բանտարկութեան ժամանակաժամկէտը կրկնապատկում են, իսկ երբեմն, յանցանքը ծանրացնող հանգամանքներում, եռապատկում: Յանցանք կրկնողը արդարադատութեան տնից դուրս գալով՝ մէկի տեղ երկու ժապաւէն է ստանում: Ստեյն կրկնուող յանցանքներ խիստ հազիւ են պատահում: Անօրմալ դրութեան մէջ գործած յանցանքը բնաւ չի պատժւում:

Թարգմ. Մ. ՊՈՊՈՎԵԱՆ

(կը շարունակուի)